Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3

Վարկ թիվ 2993-ARM

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն	7
Կառավարության համաֆինանսավորման հաշվի (ՀՀ դրամ) հաշվետվություն	9
ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ	10
Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961

Հայաստանի Հանրապետության կառավարությանը

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) 2993-ARM վարկային համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող և «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3-ի (Ծրագիր) կից ներկայացված ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, կանխավճարի հաշվի հաշվետվությունը և կառավարության համաֆինանսավորման հաշիվների հաշվետվությունները, ինչպես նաև ծախսերի մասին հաշվետվությունը (ԾՄՀ), որոնք ներկայացվել են Ասիական Զարգացման Բանկ՝ 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 2993-ARM վարկային համաձայնագրի շրջանակներում համալրումները հիմնավորելու նպատակով, հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով՝

- Կից ծրագրի ֆինանսական հաշվետվությունները և ներկայացված ծանոթագրությունները, որոնք նույնպես ենթարկվել են աուդիտի, տալիս են Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3-ի՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցների վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ընթացքում ստացված և վճարված դրամական միջոցների ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրատարակված Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՀՀՄՍ)՝ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով», Ասիական Զարգացման Բանկի ուղեցույցների («Ծրագրի Ֆինանսական Կառավարում և Վերլուծություն») և թիվ 2993-ARM վարկային համաձայնագրի համապատասխան դրույթների:

- «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ն Ասիական Զարգացման Բանկից ստացված բոլոր վարկային միջոցներն օգտագործել է միայն Ծրագրի նպատակների համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև ստորագրված վարկային համաձայնագրի, և վարկային միջոցներից ստացված գումարները չեն օգտագործվել այլ նպատակների համար:
- «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը հաշվետու ամսաթվի դրությամբ բավարարում է թիվ 2993-ARM վարկային համաձայնագրի բոլոր ֆինանսական դրույթները:

Ի հավելումն,

- (ա) Ծախսերի մասին հաշվետվության (ԾՄՀ) հետ կապված՝ բոլոր անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են Ասիական Զարգացման Բանկ կատարված ծախսերի հատուցման նպատակով, և (բ) ծախսերն ընդունելի են թիվ 2993-ARM վարկային համաձայնագրի շրջանակներում:
- (ա) Կանխավճարի հաշիվը և կառավարության համաֆինանսավորման հաշիվները տալիս են 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ստացված և վճարված դրամական միջոցների իրական պատկերը, և (բ) ստացված և վճարված դրամական միջոցները հիմնավորում են կանխավճարի հաշվի մարումը/համալրումը՝ 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքների շեշտադրում

- Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ղեկավարությանը՝ Ասիական Զարգացման Բանկի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

- Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 10-ի վրա: «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցք» ողջ ծրագրի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությունը կատարում է ուսումնասիրություններ, որի արդյունքում քրեական գործ է ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե՝ նախաքննություն կատարելու հանձնարարությամբ: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:
- Ի լրումն, մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 1-ի վրա, որտեղ ներկայացված է, որ Ծրագրի փակման ամսաթիվը 2019թ. սեպտեմբերի 14-ն է: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության պատասխանատվությունը ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ղեկավարությունը պատասխանատու է սույն ծրագրի ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն ՀՀՀՀՄՍ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքի», 2993-ARM վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների և Ասիական Զարգացման Բանկի ուղեցույցների: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ծրագրի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

Grant Thornton

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Գնահատում ենք ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

28 հունիս 2019թ.

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարի

ԱՄՆ դոլար		2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի			2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Ծանոթ.	Փաստացի	Պլանավորված	Տարբերություն	Փաստացի	Պլանավորված	Տարբերություն
Բանկային հաշիվների սկզբնական մնացորդ	4	910,279					
Ավելացնել՝ Ֆինանսավորում							
ԱԶԲ վարկ թիվ 2993-ARM (SF)	5	7,491,914			30,879,358		
Կառավարության համաֆինանսավորում	6	1,424,726			9,849,972		
Ընդամենը ֆինանսավորում		8,916,640			40,729,330		
Փոխարժեքային տարբերությունից օգուտ		1,517			7,631		
Նվազեցնել՝ Ծախսեր							
ԱԶԲ վարկ թիվ 2993-ARM	7.1	7,491,914	9,318,300	(1,826,386)	30,879,358	32,705,744	(1,826,386)
Կառավարության համաֆինանսավորում	7.2	1,552,747	1,684,003	(131,256)	9,073,828	9,205,084	(131,256)
Ընդամենը ծախսեր		9,044,661	11,002,303	(1,957,642)	39,953,186	41,910,828	(1,957,642)
Բանկային հաշիվների վերջնական մնացորդ	4	783,775			783,775		

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2019թ. հունիսի 28-ին՝

Քրիստինե Ղալեչյան
Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Նարինե Միքայելյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման ծառայության

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Կանխավճարի հաշվի (ԱՄՆ դոլար) հաշվետվություն

Հաշվարկային հաշվի համար՝ 900000900051

Բանկ՝ Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարան

Հասցե՝ Երևան 0010, Մելիք-Ադամյան 1

Վարկ թիվ 2993-ARM

Արժույթ՝ ԱՄՆ դոլար

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար	ԱՄՆ դոլար
Մնացորդ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	-
Ավելացնել՝	
ԱԶԲ ֆինանսավորում	797,162
Ընդամենը մուտքեր	797,162
Նվազեցնել՝	
Ծրագրային ծախսեր	797,162
Ընդամենը ելքեր	797,162
Մնացորդ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2019թ. հունիսի 28-ին՝

Քրիստինե Ղալեչյան
Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Նարինե Միքայելյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման ծառայության պետ

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Կառավարության համաֆինանսավորման հաշվի (ՀՀ դրամ) հաշվետվություն

Հաշվարկային հաշվի համար՝ 900000929217

Բանկ՝ Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարան

Հասցե՝ Երևան 0010, Մելիք-Ադամյան 1

Վարկ թիվ 2993-ARM

Արժույթ՝ ՀՀ դրամ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

	ԱՄՆ դոլար
Մնացորդ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	6,655
Ավելացնել՝	
Կառավարության համաֆինանսավորում	1,431,369
Բյուջե վերադարձված գումար	(6,643)
Ընդամենը մուտքեր	1,424,726
Փոխարժեքային տարբերությունից վնաս	141
Նվազեցնել՝	
Ծրագրային ծախսեր	1,429,571
Ընդամենը ելքեր	1,429,571
Մնացորդ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,951

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2019թ. հունիսի 28-ին՝

Քրիստինե Ղալեչյան
Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Նարինե Միքայելյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման ծառայության

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարկ թիվ 2993-ARM
ԱՄՆ դոլար

Դիմումի համար	Հոդված	Ապրանքներ, աշխատանքներ, խորհրդատվական ծառայություններ և Ծրագրի կառավարման աջակցություն	
		ԱԶԲ ֆինանսավորման մաս*	Փոխհատուցվող գումար
00078			
	1. Աշխատանքներ	100%	891,231
	2. Խորհրդատվական ծառայություններ	100%	2,932
	3. Ապրանքներ	100%	955
	4. Ծրագրի կառավարման աջակցություն	100%	74,882
			970,000
00080			
	2. Խորհրդատվական ծառայություններ	100%	97,501
	4. Ծրագրի կառավարման աջակցություն	100%	54,348
			151,849
00084			
	2. Խորհրդատվական ծառայություններ	100%	40,635
	4. Ծրագրի կառավարման աջակցություն	100%	110,481
			151,116
00086			
	1. Աշխատանքներ	100%	5,895
	2. Խորհրդատվական ծառայություններ	100%	86,579
	4. Ծրագրի կառավարման աջակցություն	100%	51,673
			144,147
00090			
	2. Խորհրդատվական ծառայություններ	100%	53,598
	3. Ապրանքներ	100%	39,990
	4. Ծրագրի կառավարման աջակցություն	100%	56,462
			150,050
Ընդամենը			**1,567,162**

*Առանց Հայաստանի Հանրապետության տարածքում գործող հարկերի և տուրքերի կիրառման:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2019թ. հունիսի 28-ին՝

Քրիստինե Ղալեչյան
Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Նարինե Միքայելյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման ծառայության

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը իրավահաջորդն է Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» Պետական Հիմնարկի և «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի իրավահաջորդը և ստեղծվել է որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1304-Ա որոշմամբ:

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ն իրականացնում է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3»-ը («Ծրագիր»), որը ֆինանսավորվում է 2014թ. մարտի 11-ին կնքված 2993-ARM վարկային համաձայնագրով՝ ստորագրված Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) կառավարության միջև: Վարկն ուժի մեջ է մտել 2014թ. հուլիսի 24-ին:

Ծրագրի ֆինանսավորման բյուջեն հետևյալն է.

Վարկ թիվ 2993-ARM

	ԱՄՆ դոլար
ԱԶԲ	100,000,000
ՀՀ Կառավարություն	32,467,457
Ընդամենը	132,467,457

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում զարգացնել ենթատարածաշրջանային և պետական ճանապարհատրանսպորտային ցանցը: Ծրագրի իրականացման արդյունքում՝

ա) կդյուրացվեն արդյունավետ ենթատարածաշրջանային տարանցիկ ճանապարհները,

բ) կմեծանա առևտրի շրջանառությունը և մրցակցությունը,

գ) կնվազեն փոխադրումների ծախսերը,

դ) կմեծանա շուկաների, աշխատատեղերի և սոցիալական ծառայությունների հասանելիությունը, և

ե) կբարելավվի կառավարումը:

Ծրագիրը կազմված է հետևյալ հիմնական բաղադրիչներից՝

Մաս 1 Թալին և Լանջիկ քաղաքների միջև 18.7կմ երկարությամբ երկուղի ճանապարհահատվածի վերակառուցում և այդ հատվածի ընդլայնում՝ վերածելով այն երկկողմանի երթևեկության քառուղի մայրուղու,

Մաս 2 ճանապարհային երկարաժամկետ ենթաոլորտային ծրագրի, ճանապարհային ակտիվների կառավարման և ճանապարհների սպասարկման կառավարման համակարգի նախապատրաստում և իրականացում,

Մաս 3 Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի (304կմ) Արտաշատից Քաջարան հատվածի տեխնիկատնտեսական ուսումնասիրության պատրաստում, և

Մաս 4 Ծրագրի իրականացման աջակցություն և Ներդրումային ծրագրի հետագա տրանշի նախապատրաստում, այդ թվում՝ դրա հետ կապված տեխնիկատնտեսական ուսումնասիրության և մանրամասն ինժեներական նախագծի պատրաստում:

Ծրագրի նախատեսվում է ավարտել մինչև 2019թ. սեպտեմբերի 14-ը: Այս ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարությունն ԱԶԲ-ին խնդրել է երկարացնել Շրջանակային համաձայնագրի և Վարկային համաձայնագրի ժամկետները մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:

Ծրագիրն իրականացվում է հետևյալ հոդվածներով.

Վարկ թիվ 2993-ARM

Կատեգորիա			ԱԶԲ ֆինանսավորում
Համար	Տեսակ	ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող Կատեգորիայի ընդհանուր հատկացված գումար (ԱՄՆ դոլար)	Տոկոսագումարը և Վարկի հաշվից տրամադրվող գումարի հիմքը
1	Աշխատանքներ	65,000,000	պահանջվող ընդհանուր ծախսերի 100%-ը*
2	Խորհրդատվական ծառայություններ	10,600,000	պահանջվող ընդհանուր ծախսերի 100%-ը*
3	Ապրանքներ	2,400,000	պահանջվող ընդհանուր ծախսերի 100%-ը*
4	Ծրագրի կառավարման աջակցություն	2,000,000	պահանջվող ընդհանուր ծախսերի 100%-ը*
5	Տոկոսագումար և պարտավճար	5,000,000	պահանջվող ընդհանուր ծախսերի 100%-ը
6	Չհատկացված	15,000,000	
	Ընդամենը	100,000,000	

* Առանց Հայաստանի Հանրապետության տարածքում գործող հարկերի և տուրքերի կիրառման:

Ծրագրի շրջանակներում հողերի օտարում և վերաբնակեցում ծախսերի ֆինանսավորումն իրականացվել է ՀՀ Կառավարության աղբյուրներից:

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, 7-րդ հարկ:

Ծրագրի շրջանակներում ընդգրկված աշխատակիցների միջին քանակը հաշվետու տարվա ընթացքում կազմել է 14 մարդ (2017թ.՝ 18):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ համաձայն ՀՀՀՀՄՍ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքի»: Համաձայն հաշվապահական հաշվառման այս սկզբունքի՝ դրամական մուտքերը ճանաչվում են ստացման պահին և ծախսերը ճանաչվում են վճարման պահին: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են Ասիական Զարգացման Բանկի ուղեցույցների («Ծրագրի Ֆինանսական Կառավարում և Վերլուծություն»), ինչպես նաև թիվ 2993-ARM վարկային համաձայնագրի դրույթների համաձայն:

2.2 Ֆինանսավորում

Վարկային հաշվից ուղղակի վճարման եղանակով ֆինանսավորումը ճանաչվում է և ներառվում է ծրագրի ֆինանսական հաշվետվություններում միայն այն ժամանակ, երբ վարկային հաշվից գումարները փոխանցվում են մատակարարներին: Կանխավճարի հաշվի ֆինանսավորումը ճանաչվում է և ներառվում է ծրագրի ֆինանսական հաշվետվություններում միայն այն ժամանակ, երբ վարկային հաշվից գումարները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարանում բացված կանխավճարի հաշվին:

Կառավարության համաֆինանսավորման գումարները ճանաչվում են որպես ֆինանսավորում և ներառվում են ծրագրի ֆինանսական հաշվետվություններում միայն այն ժամանակ, երբ դրանք փոխանցվել են Ծրագրի ընթացիկ հաշվին («Կառավարության համաֆինանսավորման հաշիվ»), որը նույնպես բացվել է Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարանում:

2.3 Պլանավորված ծախսեր

Տարվա վերջի դրությամբ «Ծրագրի պլանավորված ծախսերը» բաղկացած են նախորդ տարվա վերջի դրությամբ «Ծրագրի փաստացի ծախսերի» և հաշվետու տարվա բյուջեի ծախսերի հանրագումարից:

2.4 Ծախսեր

Ծրագրային ծախսերը ճանաչվում են որպես այդպիսին և ներկայացվում են ծրագրի ֆինանսական հաշվետվություններում, երբ կատարվում են վճարումներ մատակարարներին՝ ապրանքների, աշխատանքների և/կամ ծառայությունների գծով: Վճարումները կատարվում են վարկային հաշվից ուղղակի վճարման եղանակով կամ կանխավճարի և Կառավարության համաֆինանսավորման հաշիվներից: Հիմնական միջոցի ձեռքբերման գծով ծախսը ճանաչվում է Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում, որը որոշ օգտագործողների համար բացահայտված է ծանոթագրություն 3-ում:

2.5 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործարքների տնտեսական բովանդակությունը: Սույն ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով (ներկայացման արժույթ):

Կառավարության կողմից համաֆինանսավորման գումարները և դրա հաշվին կատարված վճարումները, որոնք տրվում են ՀՀ դրամով, փոխարկվում են ԱՄՆ դոլարի՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից գործարքի նախորդ օրը հրապարակած փոխարժեքով: Ասիական Զարգացման Բանկի միջոցներից Ծրագրի գործընկերներին կատարված գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված ուղղակի վճարումները գրանցվում են LFIS (https://lfis.adb.org) համակարգի փոխարժեքով:

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի նախորդ օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամով դրամային հոդվածները վերահաշվարկվում են ԱՄՆ դոլարի՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմել է 483.75 ՀՀ դրամ (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 484.10 ՀՀ դրամ):

3 Հիմնական միջոցներ

Ծրագրի հիմնական միջոցները բաղկացած են Ծրագրի իրականացման ժամանակաշրջանում «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործունեությունն ապահովելու նպատակով ձեռք բերված գույքից և սարքավորումներից: Հիմնական միջոցների արժեքը ներառում է ձեռքբերման գինը և ձեռքբերման հետ կապված այլ ծախսեր, որոնք ֆինանսավորվել են ԱԶԲ միջոցներից: Ծրագրի շրջանակներում փաստացի օգտագործվող հիմնական միջոցները հետևյալն են.

ԱՄՆ դոլար	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Համակարգչային ծրագիր և սարքավորումներ	-	21,010
Գույք	-	833
Այլ	-	687
	-	22,530

4 Բանկային հաշիվներ

Ծրագրի բանկային հաշիվների մնացորդներն արտացոլված են ստորև ներկայացված աղյուսակում.

	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ
ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշիվ ՀՀ դրամով	1,951	943,620
Բանկային հաշիվ ՀՀ դրամով (հաշիվ՝ 15100-09017860800)	781,824	378,207,374
Ընդամենը	783,775	379,150,994

	2018թ. հունվարի 1-ի դրությամբ	
	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ
ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշիվ ՀՀ դրամով	6,655	3,221,475
Բանկային հաշիվ ՀՀ դրամով (հաշիվ՝ 15100-09017860800)	903,624	437,444,293
Ընդամենը	910,279	440,665,768

5 ԱՋԲ ֆինանսավորում

ԱՄՆ դոլար	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկ թիվ 2993-ARM (SF)		
Կանխավճարի հաշիվ	797,162	4,513,609
Ուղիղ վճարում	5,953,559	24,813,061
Տոկոսներ	741,193	1,552,688
	7,491,914	30,879,358

6 Կառավարության համաֆինանսավորում

ԱՄՆ դոլար	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկ թիվ 2993-ARM		
Կառավարության համաֆինանսավորում	1,431,369	7,420,062
Նվազեցնել. բյուջե վերադարձված գումար	(6,643)	(6,735)
	1,424,726	7,413,327
Կառավարության համաֆինանսավորում, ՀՕՏԾ ֆինանսավորում	-	2,533,963
Նվազեցնել. բյուջե վերադարձված գումար	-	(97,318)
	-	2,436,645
	1,424,726	9,849,972

7 Ծախսեր

7.1 ԱԶԲ միջոցներից

ԱՄՆ դոլար

Վարկ թիվ 2993-ARM	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի			2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Փաստացի	Պլանավորված	Տարբերություն	Փաստացի	Պլանավորված	Տարբերություն
Աշխատանքներ	4,771,138	5,454,445	(683,307)	22,453,747	23,137,054	(683,307)
Խորհրդատվական ծառայություններ	1,600,042	2,696,883	(1,096,841)	5,141,593	6,238,434	(1,096,841)
Ապրանքներ	39,990	41,312	(1,322)	49,615	50,937	(1,322)
Ծրագրի կառավարման աջակցություն	339,551	384,467	(44,916)	1,681,715	1,726,631	(44,916)
Տոկոսագումար և պարտավճար	741,193	741,193	-	1,552,688	1,552,688	-
	7,491,914	9,318,300	(1,826,386)	30,879,358	32,705,744	(1,826,386)

Ծրագրի կառավարման աջակցության ծախսերը ներկայացված են ստորև.

ԱՄՆ դոլար

	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխհատուցում աշխատակիցներին	239,742	1,272,892
Վարձակալական ծախսեր	72,538	261,820
Խորհրդատվական ծախսեր	10,991	41,420
Գործուղման ծախսեր	3,464	24,948
Մեքենա-սարքավորումների ծախսեր	-	18,976
Գրասենյակային ծախսեր	3,726	14,880
Հաղորդակցման ծախսեր	305	11,382
Ներկայացուցչական ծախսեր	617	3,801
Այլ ծախսեր	8,168	31,596
Ընդամենը	339,551	1,681,715

7.2 Կառավարության համաֆինանսավորման միջոցներից

ԱՄՆ դոլար

Վարկ թիվ 2993-ARM	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի			2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Փաստացի	Պլանավորված	Տարբերություն	Փաստացի	Պլանավորված	Տարբերություն
Աշխատանքներ	1,069,272	1,306,551	(237,279)	6,247,704	6,484,983	(237,279)
Խորհրդատվական ծառայություններ	340,176	354,825	(14,649)	1,108,929	1,123,578	(14,649)
Հողերի օտարում և վերաբնակեցում	123,176	-	123,176	1,650,508	1,527,332	123,176
Ապրանքներ	-	-	-	1,921	1,921	-
Ծրագրի կառավարման աջակցություն	20,123	22,627	(2,504)	64,766	67,270	(2,504)
	1,552,747	1,684,003	(131,256)	9,073,828	9,205,084	(131,256)

Ծրագրի կառավարման աջակցության ծախսերը ներկայացված են ստորև.

ԱՄՆ դոլար	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարձակալական ծախսեր	14,508	40,162
Խորհրդատվական ծախսեր	3,943	13,263
Մեքենա-սարքավորումների ծախսեր	-	3,460
Գրասենյակային ծախսեր	577	2,716
Հաղորդակցման ծախսեր	20	2,133
Ներկայացուցչական ծախսեր	58	185
Այլ ծախսեր	1,017	2,847
Ընդամենը	20,123	64,766

8 «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կողմից ստացված գումարների և ԱՋԲ-ի փոխհատուցումների համադրում

Վարկ թիվ 2993-ARM
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

ԱՄՆ դոլար		ԱՋԲ	Կազմակերպություն	Տարբերություն
Աշխատանքներ				
	00078	66,749	66,749	-
	00079	891,231	891,231	-
	00086	5,895	5,895	-
	00087	2,311,438	2,311,438	-
	00088	577,872	577,872	-
	00091	1,344,078	1,344,078	-
	00092	334,606	334,606	-
		5,531,869	5,531,869	-
Խորհրդատվական ծառայություններ				
	00079	2,932	2,932	-
	00080	97,501	97,501	-
	00081	461,280	461,280	-
	00082	384,944	384,944	-
	00083	102,296	102,296	-
	00084	40,635	40,635	-
	00085	101,216	101,216	-
	00086	86,579	86,579	-
	00089	269,080	269,080	-
	00090	53,598	53,598	-
		1,600,061	1,600,061	-

ԱՄՆ դոլար		ԱԶԲ	Կազմակերպություն	Տարբերություն
	00079	955	955	-
	00090	39,990	39,990	-
		40,945	40,945	-
Ծրագրի կառավարման աջակցություն				
	00079	74,882	74,882	-
	00080	54,348	54,348	-
	00084	110,481	110,481	-
	00086	51,673	51,673	-
	00090	56,462	56,462	-
		347,846	347,846	-
Կանխավճարի հաշվի կանխավճար				
	00079	(770,000)	(770,000)	-
		(770,000)	(770,000)	-
Տոկոսներ		741,193	741,193	-
Ընդամենը		7,491,914	7,491,914	-

9 Ծրագրի իրականացում

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվել է վճարումների մասով միայն 30%-ը, իսկ փաստացի կատարված աշխատանքների (Շինարարություն Տրանշ 3) մասով՝ 21.5%-ը:

10 Իրավական հարցեր

- «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցք» ողջ ծրագրի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությունը կատարում է ուսումնասիրություններ, որի արդյունքում քրեական գործ է ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե՝ նախաքննություն կատարելու հանձնարարությամբ: Սույն հաշվետվության ամսաթվի դրությամբ Կազմակերպության ղեկավարությունը չի կարող գնահատել այս ուսումնասիրությունների ազդեցությունը Ծրագրի արդյունավետության վրա:
- Հաշվետվության ամսաթվի դրությամբ ընդդեմ Կազմակերպության առկա են դատական հայցեր, որտեղ հայցվորները պահանջում են, որպեսզի Կազմակերպությունը գնի նրանցից արդեն ձեռք բերված հողամասերի չօտարված հատվածները: